**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-9/8-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան                                                                                    27 -ը ապրիլի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Դիլանյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **28.03.2018թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-9/8-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***125,917,100 (հարյուր քսանհինգ միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ, պայմանագրի 1-ին և 2-րդ անվանափոխերով ԱԱՀ վճարող է,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 4 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **Ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«Կոնվերս բանկ» ՓԲԸ** |
| Հ/Հ **900011144129** | **Հ/Հ 1930048363450100** |
| ՀՎՀՀ 02522[illegible] | **ՀՎՀՀ 02621803** |
| ՀՀ պաշտպանության նախարարության | **տնօրեն** |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա. ԴԻԼԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Մատակարարումը՝ 2018թ 2-րդ եռամսյակ | Մատակարարումը՝ 2018թ 3-րդ եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Բժշկական այլ գործիքներ և պարագաներ** /Կասետներ նախատեսված sterrat 100 s տերիլիզատորի համար/ | տուփ | 35 | 288,000 | 10,080,000 | 35 | |
| 2. | **Բժշկական այլ գործիքներ և պարագաներ** /Կասետներ նախատեսված sterrad* nxստերիլիզատորի համար/ | տուփ | 20 | 330,600 | 6,612,000 | 20 | |
| 3. | **Վիրաբուժական գործիքներ** /Հարմոնիկ ուլտրաձայնային էլեկտրադանակի ծայրադիր / | տուփ | 9 | 2,181,700 | 19,635,300 | 7 | 2 |
| 4. | **Վիրաբուժական գործիքներ** /Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր/ | տուփ | 9 | 2,249,900 | 20,249,100 | 7 | 2 |
| 5. | **Վիրաբուժական գործիքներ** /Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակրգով՝ ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար/ | տուփ | 2 | 1,861,000 | 3,722,000 | 2 | |
| 6. | **Վիրաբուժական գործիքներ** /Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակարգով՝ ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար/ | տուփ | 2 | 2,061,600 | 4,123,200 | 2 | |
| 7. | **Վիրաբուժական գործիքներ** /Բռնակ ձեռքի ակտիվացման համար, նախատեսված harmonic gen11 գեներատորի համար/ | տուփ | 7 | 1,166,500 | 8,165,500 | 7 | |
| 8. | **Վիրաբուժական գործիքներ** /Ենթակոճային շրջանի, վերին և ստորին ծնոտի աղեղի և մարմնի կոտրվածքների քիչ ինվազիվ բուժման համար նախատեսված՝ ներբերանային մուտքով, 90 աստիճանի տակ ծակելու և պտուտակներ ձգելու համար նախատեսված սարքավորման գործիքների հավաքածուի ծախսվող նյութերի հավաքածու:/ | հավաքածու | 1 | 5,760,000 | 5,760,000 | 1 | |
| 9. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման ուժային մոդուլի հավաքածու:/ | հավաքածու | 1 | 14,000,000 | 14,000,000 | 1 | |
| 10. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման ծայրակալների հավաքածու/ | հավաքածու | 1 | 15,700,000 | 15,700,000 | 1 | |
| 11. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման շեղբերի, շաղափների և մաքրման, խնամքի համար անհրաժեշտ միջոցների հավաքածու/ | հավաքածու | 1 | 5,870,000 | 5,870,000 | 1 | |
| 12. | **Վիրաբուժական գործիքներ** /Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ՝ խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով/ | հատ | 10 | 1,200,000 | 12,000,000 | 10 | |
| **Ընդամենը՝** | | | | | **125,917,100** | | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2018թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ. |
| 1. | **Բժշկական այլ գործիքներ և պարագաներ** /Կասետներ նախատեսված sterrat 100 s տերիլիզատորի համար/ | 33141211/531/10/5 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 |
| 2. | **Բժշկական այլ գործիքներ և պարագաներ** /Կասետներ նախատեսված sterrad* nx ստերիլիզատորի համար/ | 33141211/542/10/5 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 | 6,612,000 |
| 3. | **Վիրաբուժական գործիքներ** /Հարմոնիկ ուլտրաձայնային էլեկտրադանակի ծայրադիր / | 33161120/392/10/5 | 19,635,300 | 15,271,900 | 15,271,900 | 15,271,900 | 19,635,300 | 19,635,300 | 19,635,300 | 19,635,300 | 19,635,300 | 19,635,300 |
| 4. | **Վիրաբուժական գործիքներ** /Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր/ | 33161120/393/10/5 | 20,249,100 | 15,749,300 | 15,749,300 | 15,749,300 | 20,249,100 | 20,249,100 | 20,249,100 | 20,249,100 | 20,249,100 | 20,249,100 |
| 5. | **Վիրաբուժական գործիքներ** /Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակրգով՝ ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար/ | 33161120/395/10/5 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 | 3,722,000 |
| 6. | **Վիրաբուժական գործիքներ** /Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակարգով՝ ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար/ | 33161120/418/10/5 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 | 4,123,200 |
| 7. | **Վիրաբուժական գործիքներ** /Բռնակ ձեռքի ակտիվացման համար, նախատեսված harmonic gen11 գեներատորի համար/ | 33161120/396/10/5 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 | 8,165,500 |
| 8. | **Վիրաբուժական գործիքներ** /Ենթակոճային շրջանի, վերին և ստորին ծնոտի աղեղի և մարմնի կոտրվածքների քիչ ինվազիվ բուժման համար նախատեսված՝ ներբերանային [illegible] | 33161120/432/10/4 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 | 5,760,000 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծակելու և պտուտակներ ծգելու համար նախատեսված սարքավորման գործիքների հավաքածուի ծախսվող նյութերի հավաքածու:/ | | | | | | | | | | |
| 9. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման ուժային մոդուլի հավաքածու:/ | 33161120/433/10/4 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 | 14,000,000 |
| 10. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման ծայրակալների հավաքածու/ | 33161120/434/10/4 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 | 15,700,000 |
| 11. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման շեղբերի, շաղափների և մաքրման, խնամքի համար անհրաժեշտ միջոցների հավաքածու/ | 33161120/443/10/4 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 | 5,870,000 |
| 12. | **Վիրաբուժական գործիքներ** /Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ՝ խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով/ | 33161120/444/10/2 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 | 12,000,000 |
| **Ընդամենը՝** | | | **125,917,100** | **117,053,900** | **117,053,900** | **117,053,900** | **125,917,100** | **125,917,100** | **125,917,100** | **125,917,100** | **125,917,100** | **125,917,100** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճող[illegible]

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ